ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1945Թ. ԽՈՐՀՐԴԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

ՄԵԼՔՈՆՅԱՆ Ք. Ֆ.

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի վարած, այսպես կոչված, «ակտիվ չեզոքության» քաղաքականությունը՝ հօգուտ ֆաշիստական Գերմանիայի, պատերազմի ավարտից հետո հանգեցրել էր խորհրդա-թուրքական հարաբերությունների վատթարացմանը և Հայկական հարցի բարձրացման ու լուծման համար նպաստավոր պայմաններ էր ստեղծել: Այդպիսով, երկարատև լռությունից հետո, 1945 թ. հայկական հողային հարցն առաջ քաշվեց ու նորից դարձավ մեծ տերությունների քննարկման առարկա: Այն վերաբերում էր ոչ թե ամբողջ Արևմտյան Հայաստանին (չնայած սփյուռքահայությունն այդպիսի պահանջ էր ներկայացրել), այլ միայն Կարսին և Արդահանին, որոնք 1921 թ. Կարսի պայմանագրով տրվել էին Թուրքիային: Կարսի և Արդահանի հարցը ոչ հրապարակայնորեն առաջ էր քաշվել դեռևս 1940 թ. նոյեմբերին՝ ԽՍՀՄ-ի արտգործնախարար Վ. Մոլոտովի՝ Բեռլին կատարած պաշտոնական այցի ընթացքում: Գերմանական կողմը «Թուրքիային վերաբերող զրույցում ասել էր, թե իրենք դեմ չեն, որ ԽՍՀՄ-ը նույնիսկ Կարսը և Արդահանը Թուրքիայից վերցնի»[1]: Սակայն այս հարցը լայն քննարկման թեմա է դարձել ավելի ուշ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, այսինքն՝ 1945 թ.:

Խորհրդա-թուրքական հարաբերություններում սառեցումը նկատվել էր դեռևս Աթաթուրքի կյանքի վերջին տարիներին, իսկ 1945 թ. ստեղծվել էր պայթունավտանգ իրավիճակ: Ֆաշիստական Գերմանիային հաղթած Խորհրդային Միությունը չէր կարող մոռանալ պատերազմի տարիների՝ Թուրքիայի վարած քաղաքականությունը, մասնավորապես այն, որ 1941 թ. հունիսի 18-ին Խորհրդային Միության վրա հարձակվելուց չորս օր առաջ Թուրքիայի և Գերմանիայի միջև գաղտնի կնքվել էր բարեկամության դաշնագիր[2]: Բացի այդ, Թուրքիան այդ տարիներին չէր թաքցնում իր ատելությունը ԽՍՀՄ-ի նկատմամբ: Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Մաջմուրայը, 1941թ. հունիսի 22-ի իր զեկուցագրում ԱՄՆ-ի կառավարությանը տեղեկացրել էր, որ «թուրք իրավասուներն ուրախությամբ են ընդունել խորհրդա-գերմանական պատերազմի սկսվելը», այնուհետև ավելացնելով, թե «այս ուրախությունը նրանք բացատրում են այն բանով, որ երկու գանգստեր երկար պայքարի վերջում, թուլացնելով մեկը մյուսին, հոգնած կընկնեն»[3]: 1941 թ. հոկտեմբերի 5-ին էլ թուրքական «Ուլուս» թերթը իմիջիայլոց

---

[1] *Peter de Mendelssohn, The Nuremberg Documents, London, 1946, p. 258*-259.

[2] *Правда, 27.III. 1947.*

[3] *Cüneyt A., Şeytan Նçgeninde Türkiye, Ankara, 1987, s. 51.*

[4] *Սահակյան Ռ. Գ.,* Սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսաբանումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ, Ե., 1964, էջ 94:

գրել էր, թե Գերմանիան շատ ճիշտ է արել ԽՍՀՄ-ի վրա հարձակվելով[4]: Թուրքական մամուլն այդ տարիներին լեցուն էր հակախորհրդային և պանթուրքիստական նյութերով: Օրինակ, «Բոզ քուրթ» («Գորշ գայլ») թերթը 1941 թ. հրապարակել էր Մեծ Թուրքիայի քարտեզը, որի մեջ ընդգրկված էին Խորհրդային Միության անդրկասպյան և անդրկովկասյան տարածքները[5]: Իսկ հետպատերազմյան գերմանական փաստաթղթերից հայտնի է դառնում, որ Թուրքիան ծրագրել էր ԽՍՀՄ-ի վրա հարձակվել Կովկասի ուղղությամբ (Բաքուն գրավելու նպատակով)[6]: Միայն 1942 թ. աշնանը թուրքական 26 դիվիզիաներ կենտրոնացված էին խորհրդա-թուրքական սահմանի մոտ: Նրանք ակնկալում էին Ստալինգրադի անկումը՝ Անդրկովկաս (ավելի ստույգ Հայաստան) ներխուժելու համար: Հայության համար դա նշանակում էր մի նոր ցեղասպանություն: Հայկական փաստաթղթերն էլ են հաստատում, որ 1941-1942 թթ. արտակարգ լարված իրավիճակ էր Լենինականի (Գյումրի), Իգդիրի, Ախալքալաքի և Բաթումի շրջակայքում, որտեղ առկա էր թուրքական հարձակման իրական վտանգ[7]: Սակայն Գերմանիան 1943 թ. փետրվարին պարտություն կրեց Ստալինգրադում, և Թուրքիան ստիպված եղավ որոշ չափով փոխել իր պահվածքը: Չնայած դրան, Թուրքիան շարունակում էր խախտել Մոնտրյոյի (1936 թ.) համաձայնագիրը՝ գերմանական և իտալական նավերին թույլատրելով օգտվել Սևծովյան նեղուցներից: Բացի այդ, Թուրքիան առանցքի երկրներին մատակարարում էր քրոմ և այլ ռազմավարական նշանակության հումքեր: Եվ երբ Ղրիմի կոնֆերանսում (1945թ. փետրվարին) քննարկվում էր ՄԱԿ-ին անդամակցության հարցը, և որոշվել էր հիմնական անդամներ ընդունել Գերմանիայի դեմ պատերազմ հայտարարած երկրներին, Ի. Ստալինը Ու. Չերչիլի պնդումով համաձայնվեց Թուրքիան ընդգրկել ՄԱԿ-ի հիմնական անդամների կազմում՝ Անկարայից պահանջելով մինչև 1945 թ, փետրվարի վերջը պատերազմ հայտարարել առանցքի երկրներին[8]: Թուրքիան, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի ճնշմամբ, 1945 թ. փետրվարի 23-ին պատերազմ հայտարարեց Գերմանիային և Ճապոնիային՝ ռազմաճակատ չուղարկելով և ոչ մի զինվոր:

1945 թ. Թուրքիայի կառավարությունը քաջ գիտակցում էր, որ պատերազմի տարիներին Թուրքիայի վարած քաղաքականությունն ունենալու է ծանր հետևանքներ: Հասկանում էր, որ Խորհրդային Միության՝ «գերտերության» նոր կարգավիճակը թույլ էր տալիս Թուրքիայի նկատմամբ կիրառել պատժամիջոցներ: Այդ առիթով թուրք պատմաբան Թահսին Ունալը գրել է. «Ռուսաստանի քաղաքական նպատակը իմանալով և մեր բարեկամներ Անգլիայի և Ամերիկայի խորհրդից հետո մենք 1945 թ. Գերմանիայի և Ճապոնիայի դեմ պատերազմ

---

[5] **Edward Reginald Vere Hodge,** *Turkish Foreign Policy during 1918-1948, Geneva, 1950, p. 143.*

[6] *Правда, 27. III. 1947.*

[7] ***Հարությունյան Ա.Հ.,*** Հայ ժողովրդի ավանդը հաղթանակի կոփման գործում (Բանբեր Հայաստանի արխիվների, 1975, N 1, էջ 137):

[8] Թեհրան, Յալթա, Պոտսդամ. փաստաթղթերի ժողովածու, Ե., 1970, էջ 137:

հայտարարեցինք և բնականոն ձևով մտանք պատերազմի մեջ»[9]: Չնայած այս քայլով Թուրքիան հնարավորություն ստացավ դառնալու ՄԱԿ-ի անդամ և օգտվելու արևմտյան երկրների հովանավորությունից, սակայն չկարողացավ մեղմել ԽՍՀՄ-ի վերաբերմունքը, որը ցանկանում էր վերահաստատել Ռուսական կայսրության 1914 թ. պետական սահմանները: Այդ ծրագիրն իրականացնելու համար Խորհրդային Միությունն արդեն վերադարձրել էր նախկինում ցարական Ռուսաստանին ենթակա, իսկ 1918-1939 թթ. իրենց անկախությունը պահպանած մերձբալթյան երկրները: 1944 թ. Ֆինլանդիայի հետ կնքված զինադադարի համաձայն, վերահաստատվել էին 1940 թ. խորհրդա-ֆիննական սահմանները, և այդպիսով, ԽՍՀՄ-ին էին անցել Պետսամոն և Արևմտյան Կարելիայի մի մասը՝ Ռումինիայի հետ 1944 թ. երեք մեծ տերությունների ստորագրած զինադադարի համաձայն, Խորհրդային Միությանը Ռումինիայից անցել էին Բեսարաբիան և Հյուսիսային Բուկովինան, Յալթայի կոնֆերանսում որոշվել էր պահպանել խորհրդա-լեհական՝ 1941 թ հունիսի 22-ին եղած սահմանը, այսինքն՝ ԽՍՀՄ-ին մնացին նախապատերազմյան Լեհաստանի արևելյան շրջանները: Խորհրդային Միությանն էին անցել Գերմանիայից՝ Արևելյան Պրուսիայի շուրջ կեսը՝ Քյոնիգսբերգ (Կալինինգրադ) քաղաքը՝ իր շրջակայքով, Չեխոսլովակիայից՝ անդրկարպատյան շրջանները, Ճապոնիայից՝ 1905 թ. ռուս-ճապոնական պատերազմի հետևանքով Ռուսաստանի կորցրած Հյուսիսային Սախալինը և Կուրիլյան կղզիների մեծ մասը: Մնում էր միայն վերահաստատել ցարական Ռուսաստանի և Օսմանյան կայսրության 1914 թ. պետական սահմանները: Այսինքն՝ վերադարձնել Կարսը և Արդահանը:

Միաժամանակ, միտում կար բավարարելու Խորհրդային Միության այն բոլոր հանրապետությունների պահանջները, որոնք մեծ ներդրում էին ունեցել ֆաշիստական Գերմանիայի դեմ հաղթանակում: Այդ հանրապետություններից էր նաև Խորհրդային Հայաստանը, որի միակ պահանջն Արևմտյան Հայաստանի տարածքների հարցն էր: Առաջին անգամ Խորհրդային Միության և համայն հայության շահերը համընկնում էին: Շեշտենք, որ Խորհրդային Միության՝ Թուրքիային տարածքային պահանջներ ներկայացնելու որոշմանը նպաստել էին ոչ միայն տարածքի ընդլայման ծրագիրը և հայ ժողովրդի արդարացի պահանջը, այլև պատերազմի տարիներին չեզոքության քողի տակ Անկարայի վարած հակախորհրդային քաղաքականությունը:

1945 թ. մարտի 19-ին Վ. Մոլոտովը, ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան Սելիմ Սափերին տեղեկացրեց, որ Խորհրդային Միությունը մտադիր է չեղյալ հայտարարել 1925 թ. դեկտեմբերի 17-ի «բարեկամության» պայմանագիրը[10]: Ավելի ուշ, ի պատասխան Թուրքիայի այն հայտարարությանը, թե իրենք պատրաստ են Մոսկվայի հետ նոր համաձայնագիր կնքել ցանկացած պայմաններով[11], ԽՍՀՄ-ը

---

[9] *Tahsin Unal, 1700 den 1958 e kadar Tьrk Siyasi Tarih, Ankara, 1958, s. 291.*

[10] *Внешняя политика Советского Союза в период Великой Отечественной войны, т. III, М., 1946, с. 146.*

[11] Նույն տեղում, էջ 148:

շտապեց ներկայացնել իր պահանջները՝ տեղեկացնելով, որ մինչև նոր համաձայնագիր ստորագրելը անհրաժեշտ է լուծել ինչպես սևծովյան նեղուցների հարցը, այնպես էլ կարգավորել խորհրդա-թուրքական սահմանները[12]: Խոսքը Կարսի և Արդահանի մասին էր: Սա Խորհրդային Միության խաղաքարտն էր՝ պատերազմի տարիների Անկարայի հակախորհրդային քաղաքականության դիմաց ներկայացրած հաշիվը, որից այդքան վախենում էին թուրքերը: Չնայած Թուրքիան ձգտում էր վերականգնել խորհրդա-թուրքական պայմանագիրը, սակայն ոչ այս հողերի հաշվին: Այս պահանջներն անընդունելի էին նրա համար: Ինչպես վկայում են թուրքական փաստաթղթերը, հունիսի 7-ին Մոսկվայում կայացած Մոլոտով-Սափեր հանդիպման ժամանակ Թուրքիայի դեսպանը հայտարարել է, թե այս առաջարկներից ոչ մեկը Թուրքիայի կառավարությունը չի ընդունի, այնուհետև հիշեցրել, որ «սահմանների կարգավորման դաշնագիրը Խորհրդային Միության համաձայնությամբ կնքվել է 1921 թ.»[13]: Վ. Մոլոտովը պատասխանել է. «Բայց այդ ժամանակ Խորհրդային Միությունը թույլ էր, իսկ այժմ ուժեղ է: Այդ պատճառով էլ համաձայնագրում փոփոխության առաջարկ է արվել»[14]:

Հասկանալի է, որ Թուրքիան հայտնվել էր դժվարին իրավիճակում, որից դուրս գալու համար անհրաժեշտ էր հզոր դաշնակից, որը կարող էր դիմակայել Խորհրդային Միությանը: Այդպիսի դաշնակիցներ դարձան Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը: Չնայած նրանք էլ սկզբնական շրջանում խորհրդա-թուրքական հարաբերություններում փորձում էին չեզոքություն պահպանել, սակայն պատերազմից հետո մեծ տերությունների ղեկավարների միջև կայացած հանդիպումների ընթացքում քննարկվել է Թուրքիային Խորհրդային Միության ներկայացրած ինչպես սևծովյան նեղուցների, այնպես էլ հայկական հողերի հարցը:

Վերջինս 1945 թ. առաջին անգամ քննարկվել է Պոտսդամում: 1945 թ. հուլիսի 16-ին ԽՍՀՄ-ի և Մեծ Բրիտանիայի արտգործնախարարների հանդիպման ժամանակ Ա. Իդենը Վ. Մոլոտովին տեղեկացրել էր, որ Լոնդոնում իր մոտ են եկել թուրքերը, և ինքը հետաքրքրություն է ցուցաբերել Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած հայկական հողերի պահանջների վերաբերյալ [15]: Վ. Մոլոտովը պատասխանել է. «1921 թ. թուրքերը օգտվեցին այն բանից, որ Խորհրդային Միությունը թույլ էր և խլեցին Խորհրդային Հայաստանի մի մասը: Խորհրդային Միության հայերն էլ վիրավորված են զգում իրենց: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ խորհրդային կառավարությունը հարց է բարձրացրել, որպեսզի օրինական ճանապարհով վերադարձվեն Խորհրդային Միությանը պատկանող հողերը»[16]: Միաժամանակ, Խորհրդային Միության արտգործնախարարը

---

[12] *Cüneyt A., նշվ. աշխ., էջ 289.*

[13] Նույն տեղում, էջ 293:

[14] Նույն տեղում:

[15] *Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны, т. VI, М., 1980, с. 41.*

[16] Նույն տեղում, էջ 40- 41:

հիմնավորել է հայկական հողերը վերադարձնելու անհրաժեշտությունը՝ պնդելով, որ «Այս տարածքները, որոնց մասին է խոսքը, չեն պատկանում թուրքերին»[17]:

Այս հարցի քննարկումը նույն ոգով շարունակվել է Պոտսդամում՝ Ստալին-Չերչիլ-Տրումեն հանդիպմանը: Երբ հուլիսի 23-ի նիստում Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Չերչիլը հանդես է եկել Թուրքիայի պաշտպանությամբ, Ի. Ստալինը հայտարարել է. «Խոսքն այն մասին է, որ վերականգնվեն մինչև I համաշխարհային պատերազմը եղած սահմանները: Ես նկատի ունեմ Կարսի մարզը, որը մինչև պատերազմը գտնվում էր Հայաստանի կազմում և Արդահանի շրջանը, որը մինչև պատերազմը գտնվում էր Վրաստանի կազմում»[18]: Ի. Ստալինի կողմից Արդահանը վրացական տարածք հայտարարելը անակնկալ էր բոլորի, նաև հայերի համար: Այդ ժամանակ ոչ ոք չէր էլ կարող պատկերացնել, թե մի քանի ամիս անց (դեկտեմբերին), Հայաստանից բացի, Թուրքիային հողային պահանջներ է ներկայացնելու նաև Վրաստանը: Այդ ընթացքում Անկարան համախոհներ և դաշնակիցներ էր փնտրում՝ Լոնդոն և Վաշինգտոն պատվիրակություններ ուղարկելով: Թուրքիայի խնդիրն այդ ժամանակ Մեծ Բրիտանիայի դիվանագիտության համար գլխացավանք էր դարձել: Նրան միայն հետաքրքրում էր սևծովյան նեղուցների հարցը: Լոնդոնը Անկարային հասկացրել էր, թե ցանկանում է նեղուցների հարցը զատել թուրք-խորհրդային դաշնագրի վերանայման խնդրից[19]: Անգլիան խոստանում էր օգնել նեղուցների հարցում, իսկ Կարսի և Արդահանի հողային պահանջների խնդրում Թուրքիան ինքն էր մտածելու իր մասին: Իհարկե, այս առաջարկն անընդունելի էր Անկարայի համար, քանի որ նրա համար նեղուցները և արևելյան նահանգներն ունեին նույն կարևորությունը: Թուրքիան Խորհրդային Միության պահանջների հարցում իր տեսանկյունը ներկայացրել էր Սան-Ֆրանցիսկոյի ՄԱԿ-ի վեհաժողովում և Լոնդոնում կայացած արտգործնախարարների խորհրդին՝ նշելով, որ «…ինք այս խնդիրը կյանքի և մահու հարց մը կը նկատէ և հայկական սահմանին վրայ առանց իր համաձայնութեան կատարած ոեէ փոփոխութեան պիտի չենթարկվի»[20]:

Թուրքիայի պաշտոնական շրջանակները, իրենց հերթին, ինչպես ցույց է տալիս այդ տարիների սփյուռքահայ և օտար մամուլը, լռություն էին պահպանում Խորհրդային Միության պահանջների իրական բնույթի մասին: Այս հարցում Թուրքիայի դիրքորոշումը ներկայացվել էր Թուրքիայի նախագահ Իսմեթ Ինոնյուի՝ նոյեմբերի 1-ի ելույթում, որտեղ անդրադառնալով Թուրքիայի՝ պատերազմի տարիների պահվածքին, նա հաստատել էր, որ, իրոք, Գերմանիայի հետ դաշնագիր են կնքել, իսկ Անդրկովկասի սահմանագլխում զորամիավորումների կենտրոնացմամբ իբր ցանկացել են կանգնեցնել ֆաշիստական Գերմանիայի մուտքը Կովկաս: Վերջում Ի. Ինոնյուն շեշտել էր. «…բացեիբաց կը հայտարարենք,

[17] Նույն տեղում, էջ 41:
[18] Նույն տեղում, էջ 144-145:
[19] Ժողովուրդ, Փարիզ, 2. XI. 1945:
[20] Նույն տեղում, 16. IX. 1945:

որ ոևէ մեկուն պարտք չունինք վճարելիք, մեր իրավունքներուն և հողերուն վրայ կապրենք պատվավոր մարդու պես և կը մեռնենք պատվավոր մարդու պես»[21]:

Դեկտեմբերի 20-ին Թուրքիայի մեջլիսում հանդես է եկել նաև թուրք գեներալ, ոչ անհայտ Քյազիմ Կարաբեքիրը՝ հայտարարելով. «Լենինը և Չիչերինը շատ անգամ են կրկնել, որ Կարսի դաշնագրով գծված սահմանները վերջնական են: Իսկ եթե Ռուսաստանը ցանկանում է վերագրավել Կարսի լեռանադաշտը, ապա դա նշանակում է, որ ձգտում է ապահովել ամբողջ Փոքր Ասիայի մեջ իր ներկայությունը»: Ըստ նրա, նեղուցները Թուրքիայի կոկորդն են, իսկ Կարսի «լեռնադաշտը» երկրի ողնաշարն է, եթե դա խորտակեն, ապա իբր «իրենք ընդմիշտ կկորչեն»: Այդ պատճառով թուրքերը պատրաստ են կռվելու և զենքով պաշտպանելու իրենց հողերը[22]: Այսինքն՝ թուրքական կողմը հրաժարվում էր բավարարել ԽՍՀՄ-ի տարածքային պահանջները: Ավելի ուշ թուրքական մամուլում հայկական հողային պահանջները որակվում են իբրև «մի նոր Մյունխեն»[23]:

Խորհրդային Միությունը, իր հերթին, շարունակում էր Թուրքիայի նկատմամբ որդեգրած քաղաքականությունը: Ավելին, նոյեմբերի 21-ին ԽՍՀՄ-ի կառավարությունը հայտարարեց, թե ծրագրել է ներգաղթ կազմակերպել դեպի Խորհրդային Հայաստան: Որոշ ժամանակ անց, ինչպես նշվեց, Հայաստանից բացի, Թուրքիային հողային պահանջներ ներկայացրեց նաև Վրաստանը: Դեկտեմբերի 14-ին, Մոսկվայի վեհաժողովի նախօրեին հրապարակվեց վրացի ակադեմիկոսներ Ս. Ջանաշիայի և Ն. Բերձենիշվիլու՝ «Թուրքիայի նկատմամբ ունեցած մեր օրինական պահանջների մասին» վերնագրով նամակը[24], որտեղ նրանք Թուրքիային ներկայացրած իրենց հողային պահանջները «հիմնավորում» են՝ «քննության առնելով» իրենց պատմությունը՝ սկսելով խեթերից և սուպրիներից հասնում են մինչև իրենց ժամանակաշրջանը: Նամակը եզրափակվում էր հետևյալ կերպ. «Վրացի ժողովուրդը հետ պետք է ստանա իր հողերը, որոնցից երբեք չի հրաժարվել և երբեք էլ չի հրաժարվի: Մենք նկատի ունենք Արդահանը, Արդվինը, Օլթին, Թորթամը, Սպերը, Բայբուրթը, Կյումուշհանեն և Արևելյան Լազիստանը»[25]:

Այս պահանջները Թուրքիայի համար նոր մտահոգության առիթ դարձան: Թուրքիայի արևելյան նահանգներում և Տրապիզոնում ցույցեր էին տեղի ունենում: Տրապիզոնում հրատարակվող «Հալք» թերթը դեկտեմբերի 26-ին գրում էր. «Մինչև որ արյան վերջին կաթիլը ցամաքի մեր երակներում, և մեր սրտերը դադարեն բաբախելե, պիտի կռվենք՝ պահելու համար մեր հողային ամբողջությունը»[26]: 1945 թ. թուրքական մամուլը միահամուռ թիկունք կանգնեց իր կառավարության հողային քաղաքականությանը: Հուսեին Ջահիդ Յալչընը՝ «Թանին»-ում, Յունուս

---

[21] Նույն տեղում, 4. XI. 1945:

[22] Նույն տեղում, 26. XII. 1945:

[23] Նույն տեղում:

[24] *Правда, 20. XII. 1945.*

[25] Նույն տեղում:

[26] Զարթոնք, Բեյրութ, 26. XII. 1967:

Նադին՝ «Ջումհյուրիեթ»-ում բացեիբաց արտահայտում էին հակահայկական գաղափարներ:

Հրաժարվելով ԽՍՀՄ-ի հետ խոսել հողային հարցի մասին՝ Թուրքիան 1945 թ. դարձավ Անգլիայի և ԱՄՆ-ի հավատարիմ դաշնակիցը: Եվ չնայած 1946 թ. Հայկական հարցը շարունակում էր մնալ քաղաքական ասպարեզում, սակայն արդեն պարզ էր, որ նույն ճակատագիրն է ունենալու, ինչպիսին ունեցավ Սան Ստեֆանոյում, Բեռլինում, Սևրում, Լոզանում և այլուր, որտեղ երբևիցե քննարկվել էր:

Այսպիսով, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մի անգամ էլ լսվեց Հայկական հարցը: Թուրքիան, ստանալով ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի աջակցությունը, մերժեց ԽՍՀՄ-ի առաջարկները և ԽՍՀՄ-ի հետ խզեց բոլոր դիվանագիտական հարաբերությունները: Մեծ պետությունները չէին կարող թույլ տալ ԽՍՀՄ-ի հզորացումը: Ինչպես նշում էր ԱՄՆ-ի պետքարտուղար Էլչիսոնը, «…այն չափով, որ մեծանա և հզորանա Հայաստանը՝ նույն չափով կաճի ուժը մեր գլխավոր թշնամու՝ Սովետական Միության»[27]: Հասկանալի է, որ այս գլխավոր թշնամու դեմ պայքարելու համար մեծ տերությունների դաշնակիցներից մեկը պետք է լիներ Թուրքիան: «Տրումենի դոկտրինայի» և «Մարշալի պլանի» իրագործման հետևանքով Թուրքիան ԱՄՆ-ից ստացավ ռազմական և տնտեսական մեծ օգնություն: Փոխարենը ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան Թուրքիայի տարածքում կառուցեցին իրենց ռազմական հենակետերը: Եվ մի անգամ էլ ոտնահարեցին հայ ժողովրդի շահերը:

Ի. Ստալինի մահից հետո՝ 1953 թ. մայիսին, Խորհրդային Միությունը հայտարարեց, որ Թուրքիայից ոչ մի հողային պահանջ չունի, և այդպիսով վերջակետ դրվեց Հայկական հարցի արծարծմանը:

АРМЯНСКИЙ ВОПРОС В СВЕТЕ СОВЕТСКО-ТУРЕЦКИХ ОТНОШЕНИЙ 1945 Г.

МЕЛКОНЯН К. Ф.

Резюме

В 1945 г. Советский Союз предъявил Турции ряд требований, в число которых входило урегулирование советско-турецкой границы. Тем самым советское правительство преследовало цель вернуть армянские земли, отданные Турции в 1921г. (согласно Карсскому договору). Армянский вопрос, хотя и безрезультатно, вновь формально и не формально стал обсуждаться на всех международных конференциях и встречах, имевших место в 1945-46 гг. В 1945 г. свои земельные требования Турции предъявила также Грузия.

Однако для Турции требования Армении и Грузии были неприемлемы. При поддержке США и Великобритании Турция отказа лась выполнить требования СССР и восстановить дипломатические отношения, прерванные в 1945 г.

---

[27] ***Անդրեասյան Ա.,*** Հայկական դատի նոր հանգրվանը, Բեյրութ, 1967, էջ 24: